գրերից մի քանիսի վրա եղած մակագրությունները ու նշումները ցույց են տալիս.

— № 4465 ձեռագիրը Հարություն արքեպս. Սանահնեցին տանելով Գանձակի Թարգմանչաց վանքը, նվիրել է նույն վանքի միաբան Գրիգոր վրդ. Տեր-Հովհաննիսյան Գանձակեցուն։

— № 3402 ձեռագիրը պատկանել է Թադեոս Երվանդյանին, որն այն 1871 թ. նվիրաբերել է Սանահնի վանքին։

— № 3400 ձեռագիրը 1759 թ. եղել է Ամստերդամի Ս. Հոգի եկեղեցում։ Այն 1793 թ. ստացել է Հովսեփ Արղությանը և նվիրաբերել Սանահնի վանքին։

— № 4331 ձեռագիրը պատկանել է Վարդան Օձնեցուն և մինչև անցյալ դարի 70-ական թթ. եղել է Սանահնում։

— № 9319 ձեռագիրը 1857—1878 թթ. եղել է ախալքալաքցի Ստեփաննոս ավագ քհ. Դեմիրճօղլյանի մոտ։

Ստորև տալիս ենք հիշատակված 34 ձեռագրերի հին և նոր թվահամարների հակադարձ համեմատական Բ տախտակը.

Բ. Համեմատական տախտակ Սանահնի գրատան ձեռագրերի նոր և հին թվահամարների

| Մատենադարան | | | Մատենադարան | | |
|---|---|---|---|---|---|
| հիմա | «Գևորգյան» | «Արարատ» 1905 | հիմա | «Գևորգյան» | «Արարատ» 1905 |
| 2375 | — | — | 3353 | 1141 | 22 |
| 2532 | 346 | — | 3354 | 1142 | 19 |
| 2659 | 1130 | 26 | 3400 | 1129 | 2 |
| 2660 | 1134 | 25 | 3401 | 1144 | 13 |
| 2745 | 1132 | 10 | 3402 | 1145 | 14 |
| 2802 | 738 | — | 3565 | 1128 | 20 |
| 2837 | 1123 | 9 | 3566 | 1139 | 18 |
| 2838 | 1124 | 6 | 3611 | 1136 | 24 |
| 2839 | 1125 | 17 | 3612 | 1138 | 21 |
| 2840 | 1137 | 12 | 3700 | 1127 | 5 |
| 3031 | 745 | — | 3701 | 1131 | 4 |
| 3048 | 1122 | 7 | 4331 | 1255 | — |
| 3049 | 1126 | 8 | 4435 | 1133 | 11 |
| 3050 | 1135 | 15 | 4465 | — | — |
| 3051 | 1143 | 16 | 4548 | 1146 | 27 |
| 3201 | 394 | — | 9319 | — | 3 |
| 3352 | 1140 | 23 | 9999 | — | 1 |

Ս. ԵԳԱՆՅԱՆ

## ՆԵՈԼԻԹԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Նոյեմբերյանի շրջանում 1965—1968 թթ. հայտնաբերվել են նեոլիթյան մի շարք նյութեր, որոնք ոչ միայն հաստատում են նրա տերիտորիայում գոյություն ունեցող վաղ երկրագործական-անասնապահական տնտեսության սաղմնավորման փաստը, այլև օգնում են լրացնելու Հայաստանի նեոլիթյան շրջանի մշակույթի ընդհանուր պատկերը, մի բան, որ դեռևս բավարար ուսումնասիրության և հստակ բնութագրման չի ենթարկվել՝ ժամանակաշրջանի պեղածո մնացորդների ու արտադրության գործիքների սակավության պատճառով։

1968 թ. օգոստոսի վերջին Կողբի դպրոցականներ Սայի և Աշոտ Արովյանները Մշկավանքի մոտ գտան սեպաձև և կացնանման քարե գործիքներ, որոնք իրենց ինքնատիպ ձևերով առաջինն էին Հայաստանում։ Լրացուցիչ ստուգումների միջոցով մեզ հաջողվեց հայտնաբերել մի քանի գործիքներ ևս, այդ թվում մուրճիկներ, ուրագաձև գործիքներ, քերիչներ, մշակված սրաբերան թալաշներ, որոնք բացվել էին հեղեղատների հետևանքով։ Հավաքածուի 25 իրից ոչ բոլորն են ավարտուն գործիքներ։ Բոլոր գործիքները պատրաստված են կրաքարից և բաժանվում են հետևյալ տիպերի՝ մուրճեր, կացիններ, քերիչներ, սեպաձև գործիքներ, ուրագներ և սկավառակաձև քերիչներ։ Սրանց մեջ առանձնապես ուշագրավ են երկու մուրճերը, որոնցից փոքրը (տախ. I, նկ. 2) պատրաստված է սպիտակ կրաքարից, ունի 16 սմ երկարություն, կլոր բնակ՝ վրան տաշվածք ցուցամատի համար, իսկ մեծը (տախ. II, նկ. 1) պատրաստված է կարմրավուն կրաքարից։ Նրա երկարությունը՝ 21, միջին հաստությունը 3 սմ է։ Գործիքի բնակը, որի վրա մատնատեղեր են արված, ունի 10 սմ երկարություն և 4 սմ լայնություն։ Հավաքածուի մեջ առավել հետաքրքրություն է ներկայացնում կացնանման գործիքը (տախ. I, նկ. 1), որը բանող մասում ունի երկկողմանի սրվածք։ Նրա երկարությունը մոտ 15, իսկ սայրի լայնությունը 8 սմ է։ Գործիքը, որը հավանաբար օգտագործվել է փայտե բռնակի միջոցով, բարակ կողմից հարմարեցված է փայտե կոթի ճեղքվածքը նստեցնելու և ամրացնելու համար։ Կացնանման նեոլիթյան գործիքներ հանդիպում են Հասունայի, Ջարմոյի[1],

[1] Гордон Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, էջ 62—64, նկ. 8։




Տախտակ I

Խուզիստանի[2] նեոլիթյան շերտերում, Ղրիմի ուսծովյան ափին՝ հատկապես Շիլովյան կայանում[3], Նարվա I նեոլիթյան բնակատեղիում[4], Օնեգայի լճափին[5], Նալչիկում[6] և այլ վայրերում: Սրանց փոքր չափի տարբերակը հայտնաբերվել է Բորանում[7], իսկ բազալտից պատրաստված, լավ ողորկած ուղղակի զուգահեռը՝ Ա. Պ. Ռունիչի Մերձկիսլովոդսկյան վաղ էնեոլիթյան հավաքածուում[8]: Իրերի այդ խմբին կարելի է դասել կրաքարի թալաշներից պատրաստված, ողորկ, մոտ 1 սմ հաստություն ունեցող գործիքները (տախ. II, նկ. 2, 3): Նրանցից մեծը (տախ. II, նկ. 3) ունի 9 սմ երկարություն, 7 սմ լայնություն և պատրաստված է մուգ մոխրագույն, իսկ փոքրը բաց օխրագույն կրաքարից (տախ. II, նկ. 2): Սրանք ունեն ուրագի բերանի նման սրվածք, որի համար անվանվում են ուրագներ: Վերջիններից փոքրի միակ զուգահեռը հայտնաբերվել է 1968 թ. էջմիածնի շրջանի Վերին Խաթունարխի «Բլուր» կոչվող նորքարեդարյան բնակատեղիում, Ռ. Թևվոսյանի պեղումների ժամանակ: Հավաքածուում փոքր թիվ չեն կազմում սեպաձև և դրաձև գործիքները, որոնք կարող էին օգտագործվել փայտագործության մեջ: Սրանք իրենց զուգահեռներն ունեն Հասսունայում[9], Նարվա I նեոլիթյան բնակատեղիում[10]: Հիշյալ գործիքներն էլ պատրաստված են կրաքարից, հերցաքարից, իսկ վերջինից պատրաստված ավելի փոքր տեսակները հանդիպել են Բորանի նեոլիթյան շերտում[11]: Գործիքների մեջ քերիչները (տախ. I,

---

[2] В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, М., 1964.

[3] А. А. Формозов, Неолит Крыма и Черноморского побережья Кавказа, МИА, СССР, М., 1962.

[4] Н. Н. Гурина, Из истории древних племен западных областей СССР, МИА СССР, № 144, Л., 1967.

[5] Н. Н. Гурина, Поселения эпохи неолита на Онежском озере, МИА СССР, М.—Л., 1951.

[6] Е. Ю. Кричевский, А. П. Круглов, Неолитическое поселение близ города Нальчика, МИА СССР, М.—Л., 1941.

[7] Н. Н. Гурина, Неолитическое поселение Борань, Палеолит и неолит СССР, МИА, М.—Л., 1960, նկ. 34:

[8] А. П. Рунич, Энеолитическое поселение близ Кисловодска, СА, 1967, № 1, էջ 231, նկ. 5—7:

[9] Гордон Чайлд, նշվ. աշխ:

[10] Н. Н. Гурина, Из истории древних племен западных областей СССР, էջ 111—115:

[11] Н. Н. Гурина, Неолитическое поселение Борань, Палеолит и неолит СССР.

նկ. 3, 4, 8, 9), որոնք ունեն թեք միակողմանի սրվածք, հավանաբար օգտագործվել են կաշեմշակության նպատակով։ Նրանց երկարությունը տատանվում է 8—12 սմ-ի միջև։ Քերիչներից միայն մեկն է, որ ունի բերանի համակողմանի դանակաձև սրվածք (տախ. I, նկ. 4)։ Միակողմանի թեք սրվածք ունի նաև սկավառակաձև գործիքը, որը միակն է հավաքածուում։ Այն ունի ավելի քան 1 սմ հաստություն, մի եզրից հարթ ու ողորկ, մյուսից՝ ուռուցիկ մակերես։ Ուռուցիկ մակերեսի ամբողջ շրջագիծը ունի թեք սրվածք (տախ. I, նկ. 6)։ Դժվար է որոշել գործիքի կոնկրետ գործածական նշանակությունը, սակայն այն հարմար է կաշեմշակության համար։ Վերջինիս զուգահեռներն առայժմ հազվագյուտ են հանդիպում ՍՍՀՄ-ի տերիտորիայում։ Այդպիսիները պատրաստված են կվարցիտից կամ թերթաքարից։ Նրանցից կարելի է հիշատակել Նարվա I նեոլիթյան բնակատեղիի գործիքները, որոնցից մեկը սկավառակաձև է, մյուսը՝ էլիպսաձև[12], իսկ Նալչիկի մոտ հայտնաբերված միակ օրինակն ունի երկու կողմից տափակ մակերես և ձվաձև տեսք[13]։



Տախտակ II

Նեոլիթյան կայաններ հավանաբար եղել են նաև Այրումի ավանում և Լճկաձորում։ 1968 թ. գարնանը Լճկաձորի գերեզմանոցում մոտ 2 մետր խորությունից հայտնաբերվել են խեցու բեկորներ և ոսկորե մի ասեղ։ Վերջինս ունի 6 սմ երկարություն և անցքի փոխարեն կտրված՝ հաստ ծայրից։ Նմանը, մոտ 11 սմ երկարությամբ անցքավորը, հայտնաբերվել է Ջուջևանի Պարի քարերի Մեծ քարի տափարակի գագաթից։ Լճկաձորի խեցու բեկորներից երևում է, որ այն պատրաստված է խիստ պարզունակ եղանակով, չթրծված, կոշտ ավազախառը կավից և նախշված է եղունգով ու սրածայր փայտով։ Նման նախշերով ու որակով է պատրաստված մերձդնեպրյան[14], բելամորյան[15] խեցեղենը։ Ուշ նեոլիթին պետք է վերագրել նաև 1968 թ. Այրումի ավանում բնակելի շենքի հիմքեր փորելու ժամանակ հայտնաբերված 21,5 սմ երկարությամբ և 11 սմ լայնությամբ քարե մուրճը և խեցին (նկ. 3)։ Հարդախառն չմաղված կավից, պարզունակ ձևով, չթրծված, կիսագնդաձև այս խեցին որոշ չափով նման է Կղզյակ բլրի և Մաշտոցի բլրի նեոլիթյան խեցեղենին[16]։

Տախտակ III

Նման որակով են պատրաստված և կիսագնդաձև են Ջափարաբադի, Բենդեբելիի, Ջոջիի[17] նեոլիթյան խեցիները, որոնք ունեն գնդաձև հատակ, ինչպես նաև աֆոնյանը[18], Նարվա II նեոլիթյան բնակատեղիինը[19], որոնց մի մասի վրա արված են եղունգի և փայտի ծայրով պարզունակ նախշեր։

1965 թ. Նոյեմբերյան գյուղից 5 կմ հեռավորության վրա «Սրոցահանք» կոչվող հանդամասում ջրաշինարարական աշխատանքի ժամանակ հայտնաբերվեց նեոլիթյան շրջանի մարդկանց գետնափոր, կլոր հատակ ունեցող, օջախատեղով մի կացարան, ուր կային կենդանիների ոսկորների մնացորդներ։ Կացարանից հայտնաբերվեց բեկոտման և հարդարման եղանակով օբսիդիանից պատրաստված դանակա-

---

12 Նույն տեղում, էջ 123, նկ. 78։

13 Е. Ю. Кричевский, А. П. Круглов, նշվ. աշխ.։

14 А. В. Подянский, Неолитический сосуд с Днепровского побережья, СА, 1967, № 2, էջ 132—133։

15 М. Е. Фосс, Неолитические культуры Северо-европейской части СССР, СА, М.—Л., 1947, № 9, էջ 30—45։

16 Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, 1967, էջ 138—140։

17 В. М. Массон, նշվ. աշխ., էջ 192—200։

18 А. П. Окладников, Неолитические погребения на Афоновой горе, КС, XXV, М.—Л., 1949, էջ 7—13։

19 Н. Н. Гурина, Поселение эпохи неолита на Онежском озере, էջ 21—6։

նման մի գործիք, որն ունի 7 սմ երկարություն և 2,5 սմ լայնություն (նկ. 4)։ Նոյեմբերյանի շրջանի մի շարք վայրերում, այդ թվում 1967 թ.

Տախտակ IV

Պտղավանի բնակիչ Բ. Անսարովի գտած 13 սմ երկարությամբ կայծքարե մանգաղի ներդիրը, որը վերջինիս կողմից հանձնվել է Թբիլիսիի պետական պատմական թանգարանին և Բաղանիսի Հարսնաքարից հայտնաբերված գայլիկոնատիպ և սղոցաձև երկու գործիքներ, որոնք նախամետաղական ժամանակաշրջանի ավելի կատարելագործված գործիքներ են, հաստատում են, որ նեոլիթյան բնակավայրերը լայն տարածում են գտել շրջանի տերիտորիայում։ Նեոլիթյան դարաշրջանի հնագիտական նյութերը հաստատում են, որ ի տարբերություն նախորդ՝ մեզոլիթյան ժամանակների, նոր քարեդարաշրջանում տոհմատիրական հասարակությունը խոշոր քայլ կատարեց հավաքչությունից՝ պարզունակ երկրագործությանը և որսորդությունից՝ անասունների ընտելացման և անասնապահությանն անցնելու ուղղությամբ։ Երկրագործական և անասնապահական մթերքների մշակման և որսորդության հետագա զարգացման համար պետք եղավ կատարելագործել քարե գործիքների մշակման տեխնիկան, գործիքներ, որոնք նեոլիթյան հասարակության արտադրության մեջ և կենցաղում շարունակում էին դեռևս փայտե և ոսկորե գործիքների հետ միասին խոշոր դեր խաղալ։ Հենց զարգացած նեոլիթի ժամանակաշրջանին են պատկանում Նոյեմբերյանի նորահայտ նյութերը, որոնց նմանները չեն հայտնաբերված ոչ միայն նշված շրջանում, այլև ողջ Հայաստանում։

Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

## НОВЫЕ ДАННЫЕ ОБ АРМЯНСКИХ ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ КРЫМА И СЕВЕРНОГО КАВКАЗА

Для составления корпуса армянских надписей Крыма и Северного Кавказа специальная эпиграфическая экспедиция Института археологии и этнографии АН Армянской ССР последние три года на местах занимается сбором этих надписей.

По данным письменных источников установлено, что еще в глубокой древности некоторые армянские князья и нахарарские роды по разным причинам эмигрировали далеко за пределы Армении. Но поток принудительной, массовой эмиграции усилился в XI в., после падения Багратидского царства и захвата армянских территорий Византией. Этому во многом способствовали опустошительные нашествия турок-сельджуков, разорение некогда цветущих городов, массовые избиения и пленения и, наконец, напряженная классовая борьба, усугубленная неизбежной феодальной междоусобицей.

«Вот почему,— пишет историк XI в. Аристакес Ластивертци,— племена инородные смогли изгнать нас из обиталища нашего»[1]. И армяне, сорванные от любимых рассеялись как звезды-планеты». Народ, по словам историка, окружали:

«С востока—меч, с запада—гибель,
С севера—пламя, с юга—смерть»[2].

Оставляя родные края, армяне-беженцы с большими трудностями обосновывались в чужих странах. Большое число анийских беженцев обосновалось также в Крыму и на Северном Кавказе, где с течением времени возникли новые культурные и духовные очаги армян.

По эпиграфическим данным и нарративным источникам, в Крыму армяне построили более ста церквей и монастырей, из коих 45—только в Феодосии, где в 1439 г. жило более 30 000 армян. Если считать, что количество духовных очагов авторами преувеличено, то можно не сомневаться, что 24 из них, бесспорно, существовали. Это подтверждается одной поэмой, приведенной в книге К. Кушнаряна, изданной в 1895 г. в Венеции[3]. Автор этой

[1] «Повествование вардапета Аристакеса Ластивертци», М., 1968, стр. 55.

[2] Там же.

[3] См. К. Кушнарян. История эмиграции крымских армян. Венеция, 1895, стр. 139—141 (на арм. яз.). (Перевод наш.— Г. Г.).